

<<Դպրոցական սնունդ>> ծրագրի միջգերատեսչական հանձնաժողովի նիստ Վայոց ձորում:

16.04.2014



ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի և ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի հետ համատեղ ա/թ ապրիլի 15-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում անցկացվեց <<Դպրոցական սնունդ>> ծրագրի միջգերատեսչական հանձնաժողովի նիստը, որի մասնակիցներին ողջունեց ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը:

Մարզպետը խոսեց ծրագրի կարևորության մասին և նձեց իր պատրաստակամությունը հնարավոր բոլոր միջոցներով ծրագրի աշխատանքներին աջակցելու վերաբերյալ: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, <<Դպրոցական սնունդ>> ծրագրում մարզից ընդգրկված կրթական հաստատությունների ղեկավարները: Իսկ ապրիլի 16-ին անցկացվեց <<ՀՀ մարզերի դպրոցներում կայուն դպրոցական սննդի զարգացման ծրագիրը հանրապետության ազգային <<Դպրոցական սնունդ>> ծրագրի ռազմավարության կոնտեքստում>> սեմինար տարածքային կառավարման մարմինների և տեղական համայնքների դպրոցական սննդի պատասխանատու աշխատակիցների համար:

Բացի կազմակերպիչներից, նիստի և սեմինարի աշխատանքներին հրավիրված էին մարզի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված փորձարարական ծրագրում ընդգրկված Սյունիքի և Արարատի մարզպետարանների պատասխանատուները: